

26.11.2018թ.

ժ.17:00

*Մասնակցում էին՝ Ս.Մասցականյան (խորհրդի նախագահ), Ս.Գավթյան, Գ.Անանյան, Ն.Բաղդասարյան, Լ.Պետրոսյան (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)*

*Հրավիրված էին՝ Լ.Միրզոյան, Ա.Հայրապետյան, Ա.Վարդանյան, Լ.Մարկոսյան:*

**Օրակարգի նախագծում երեք հարց.**

1. «2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

3. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

1. «2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Լ.Մարկոսյան/*

**Որոշեցին՝**

հաստատել 2019 թվականի հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում տնային տնտեսություններում իրականացվելիք «Կենսապայմանների ամբողջացված հետազոտության հարցաթերթն ու ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների օրագիրը»՝ համաձայն հավելվածի:

*/Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**Լսեցին՝**

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 24-ի թիվ 20-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու» և «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2000 թվականի օգոստոսի 15-ի թիվ 10 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 20-Ն որոշումը և հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմուրիվ, Անհատական/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ